ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ (ԿԱՄԱՎՈՐ) ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2022

## ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2022 թ. «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաները դասավանդող ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման հարցաթերթիկի կառուցվածքը և դրա լրացման կարգը, ինչպես նաև առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

Ուսուցիչների ատեստավորման հարցաթերթիկի կազմման համար որպես հիմք են ընդունվել «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների հանրակրթական դպրոցի ծրագրերը:

Առաջադրանքներում ընդգրկվելու են «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները, որոշ քարտեզներ և դասագրքերում առկա նկարներ:

## ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հարցաթերթիկի ընդհանուր միավորը 100 է: Կարճ պատասխանով առաջադրանքներին տրվում է ընդհանուր 34, ընտրովի պատասխանով առաջադրանքներին՝ 17, ընդարձակ պատասխաններով առաջադրանքներին՝ 49 միավոր:

Ըստ առաջադրանքի բարդության՝ յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 0,25-ից մինչև 7 միավոր: Յուրաքանչյուր պատասխանի միավորը գրված է առաջադրանքի մոտ:

Հարցաթերթիկի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

***1. Կարճ պատասխանով առաջադրանքներ***

Տրված են ժամանակագրական հաջորդականության, համապատասխանության, բոլոր ճիշտ պատասխանների ընտրությամբ, բոլոր սխալ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ, որոնց ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը պետք է տեղադրել ձևաթղթի համապատասխան վանդակներում:

Ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է նախատեսված միավոր, սխալ կամ թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

***2. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ***

Ձևակերպվում է հարցը և տրվում է պատասխանի տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտը: Ճիշտ պատասխանի համար տրվում է միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

<u>Պատասխանների ձևաթղթում</u> ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված են համապատասխան թվով վանդակներ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է համապատասխանող վանդակում գրել պատասխանի թիվը:

***3. Ընդարձակ պատասխանով առաջադրանքներ***

Տրված հարցերին, նկարներին, հապավումներին պետք է տալ ընդարձակ պատասխաններ: Անհրաժեշտ է ընթեռնելի ձեռագրով գրել պատասխանները ձևաթղթում:

Ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է նախատեսված միավոր, սխալ կամ թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: